ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2020թ. N 217-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 8/3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՏՈՒՆ 2-Ի ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ԱՐԱՄԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ,38-րդ հոդվածի1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 01.07.2020թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ համայնքի Գնդևազ գյուղի բնակիչ Կարեն Արամի Հովսեփյանին պատկանող BMW 530I մակնիշի, 35GL160 պետհամարանիշի, 2000թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2017-2019թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 257472 ՀՀ դրամ, որից տույժ՝ 57072 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Կարեն Արամի Հովսեփյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 257472 (երկու հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Արամի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2020թ. N 218-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՇԵՆՔԻ N 32 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ԴԱՎԻԹ ԱՐԱՅԻԿԻ ԵՓՐԵՄՅԱՆԻՑ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 01.07.2020թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ համայնքի Շահումյան փողոցի, 5-րդ շենքի, 32-րդ բնակարանի բնակիչ Դավիթ Արայիկի Եփրեմյանին պատկանող PORSCHE CAYENNE S 4.5 մակնիշի, 79PO799 պետհամարանիշի, 2004թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2019թ. ընկած ժամանակահատ– վածի վերաբերյալ, որը կազմում է 154454 դրամ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 5-րդ շենքի N 32 բնակարանի բնակիչ Դավիթ Արայիկի Եփրեմյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջե գանձել 154454 (հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դավիթ Արայիկի Եփրեմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2020թ. N 219-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Ա. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետերի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-22-րդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմանը համապատասխան՝ հիմք ընդունելով համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչներ Ա. Խ. Մնացականյանի դիմումը (մտից N 4166 31.03.2020թ.) և նրա ընտանիքի անդամների՝ համասեփականատերերի գրավոր համաձայնությունները՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչներ Ալբերտ Խաչիկի Մնացականյանին, Զարուհի Գրիգորի Խաչատրյանին, Լիլիթ, Արկադի և Արայիկ Ալբերտի Մնացականյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հունիսի 11-ի N 11062020-10-0004 վկայական) Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության (հողատեսքը՝ վարելահող) 10-016-0217-0008 կադաստրային ծածկագրով 4830 քմ հողամասում ինքնակամ կառուցված 84,27 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ տուն, պատշգամբ և տաղավար (այսուհետ՝ Շինություն) համարել օրինական և տրամադրել հետևյալ հասցեն՝ *Ջերմուկ համայնքի, գ. Գնդեվազ 5/2-րդ փողոց, տուն N 1/1:*

2. Շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին. այն պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Շինության օրինականացումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի «Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի

վրա բնակելի, հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների կառուցումը սահմանափակելու մասին» N 498 որոշմամբ սահմանված պայմաններին:

4. Շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031583 հաշվեհամարին մուծել 41245 (քառասունմեկ հազար երկու հարյուր քառասունհինգ) դրամ գումար, որից՝ 33 589 (երեսուներեք հազար հինգ հարյուր ութսունինն) դրամը՝ բնակելի տան, իսկ 7656 (յոթ հազար վեց հարյուր հիսունվեց) դրամը՝ տաղավարի (օժանդակ շինություն) համար, հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա. Խ. Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հուլիսի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2020թ. N 220-Ա

«ԳՆԴԵՎԱՆՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հաշվի առնելով «Գնդեվանք» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գ. Հովակիմյանի դիմում-հայտը (մտից՝ 902, 2020 թվականի հուլիսի 27) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել «Գնդեվանք» ՍՊ ընկերությանը տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 9):

2. «Գնդեվանք» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գնդեվանք» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2020թ. N 221-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 8-ի՝

ա) «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,12802 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 199-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «բնակավայրերի» բառը փոխարինել «հատուկ պահպանվող տարածքների հողերի» բառով, 1-ին կետում՝ «հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «հանգստի համար նախատեսված» բառերով,

բ) «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,29647 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 200-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «բնակավայրերի» բառը փոխարինել «հատուկ պահպանվող տարածքների հողերի» բառով, 1-ին կետում՝ «հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «հանգստի համար նախատեսված» բառերով,

գ) «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,11809 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 201-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում «բնակավայրերի» բառը փոխարինել «հատուկ պահպանվող տարածքների հողերի» բառով, 1-ին կետում՝ «հասարակական կառուցապատման» բառերը փոխարինել «հանգստի համար նախատեսված» բառերով,

դ) «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,0778 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 196-Ա որոշման 2-րդ կետում՝ «N 2» թիվը փոխարինել «N 6» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2020 թ. N 222-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՐԳԵՎ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԸ ԵՎ ՎԵՃԻ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ մասով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացնել Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչներ Կարինե (ծնված՝ 04.09.2003 թ.), Մագդա (ծնված՝ 26.03.2007 թ.) և Ալբերտ (ծնված՝ 24.09.2012 թ.) Պարգևի Մարգարյանների և նրանց հոր՝ Պարգև Ալբերտի Մարգարյանի կյանքի պայմանների հետազոտության ակտը՝ կազմված Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից ս/թ հուլիսի 31-ին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հետազոտության ակտի հիման վրա տալ եզրակացություն առ այն, որ

- *անչափահասներ Ալբերտ, Մագդա և Կարինե Մարգարյանները մինչև ս/թ մայիսի 15-ը մշտապես եղել են երկու ծնողների խնամքի ներքո,*
- *մայիսի 15-ին երեխաների մայրը Մագդայի հետ տեղափոխվել է ք. Էջմիածին, մյուս երեխաները շարունակում են գտնվել հոր՝ Պարգև Մարգարյանի խնամքի ներքո, ապրում են նրան պատկանող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 7-րդ շենքի N 8 բնակարանում,*
- *Պարգև Մարգարյանը անհրաժեշտ խնամք և հոգատարություն է իրականացնում իր մոտ գտնվող երեխաների նկատմամբ, բնակարանային և կենցաղային պայմանները լիարժեք նպաստավոր են:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2020թ. N 223-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 112-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Պանդուխտի Գալստյանի՝ 484 927 (չորս հարյուր ութսունչորս հազար իննը հարյուր քսանյոթ) դրամ գույքահարկի գծով պարտավորությունների կատարման ժամանակացույց կազմելու մասին դիմումը (մտից N 933, 04.08.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 4-ի «Ջերմուկ համայնքի Շահումյան 5-րդ շենքի N 37 բնակարանի բնակիչ Կարեն Պանդուխտի Գալստյանի չվճարած գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին»N 112-Ա որոշման կատարումը հետաձգել մեկ տարի ժամկետով՝ մինչև 01.08.2021թ.:

2. Կազմել պարտավորության մարման ժամանակացույց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Պանդուխտի Գալստյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2020թ. N 224-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՈՒՇԵՂ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի դրույթներով, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Մուշեղ Աղաջանյանի դիմումը (մտից N 876, 22.07.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Թույլատրել Ջերմուկ համայնքի բնակիչ Մուշեղ Աղաջանյանին փոխելու սեփական բնակելի նշանակության անշարժ գույքի՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ շենքի N 30 բնակարանի (հիմք՝ Անշարժ գույքի առուվաճառքի և գրավի /հիպոթեքի պայմանագիր թիվ N 2048223), գործառնական նշանակությունը որպես հասարակականի՝ տարածք, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:

2. Մուշեղ Աղաջանյանին պարտավորեցնել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գործառնական նշանակության փոփոխությամբ պայմանավորված, որպես հասարակական նշանակության տարածք տիրապետող սուբյեկտ, աղբահանության պայմանագիր կնքել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի հետ:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2020թ. N 225-Ա

««ՋԵՐՄՈՒԿԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին» N 6-Ն որոշման, հիմք ընդունելով ««Ջերմուկի նոր կյանք» առողջարան» ՍՊ ընկերության տնօրենի՝ ս/թ օգոստոսի 4-ի դիմումը (մտից N 936)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. ««Ջերմուկի նոր կյանք» առողջարան» ՍՊ ընկերությանը տալ Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 2 հասցեում օժանդակ շինություններ կառուցելու շինարարության թույլտվություն

:

2. ««Ջերմուկի նոր կյանք» առողջարան» ՍՊ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ««Ջերմուկի նոր կյանք» առողջարան» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 օգոստոսի 4
Ջերմուկ